

ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

Սիրելի եղբայրներ, ամեն մարդ թող արագ ըլլայ լսելու եւ ծանր խօսելու եւ բարկանալու մէջ, որովհետեւ մարդուն բարկութիւնը Աստուծոյ արդարութիւնը կը հեռացնէ: (Յակ. 1.16-20)

Սիրելիներ, ճանչնալէն ետք բարկութեան չարիքները եւ մանաւանդ գիտնալէ ետք, թէ ինչպիսի բարիքներէ պիտի զրկուինք, երբ Աստուծոյ արդարութենէն բաժնուինք, զգոյշ ըլլանք մեր անձերուն նկատմամբ ու հեռանալով բարկութենէն եւ անոր չարութենէն, ինչպէս կատարի գազանէ մը: Զրկայ թէ ի՞ժի պէս մեր մէջ բոյն դնելով վնասէ մեր հոգիներուն, խայթէ մեր կրունկը եւ հեծեալը գետին ձգէ: Եթէ Աստուծոյ այլ դատաստանները եւ վրէժխնդրութիւնը բարկացողներուն չէին, գէթ մարդոցմէ պէտք էր շառագունիլ ու դողալ, եւ ոչ թէ գազանի նման անընտել եւ վայենի՝ բոլոր տեսողներուն ծաղրանքի առարկայ ըլլալ: Օձերու եւ կարիճներու բնութիւնն է միշտ գազանութեան մէջ մնալը, որոնք որու որ մօտենան կը գարնեն, կը վիրաւորեն եւ այդ պատճառաւ բոլորին ատելի են եւ ամէն ոք իր ձեռքը կը գինէ գանոնք սպաննելու: Անոնց մի նմանիւր դուն, որ բանաւոր եւ իմաստուն ես: Անոնք բռնութեամբ ունին գազանութիւն, այդպէս ստեղծուած ըլլալով Արարիչէն, սակայն դուն նոյնպէս չստեղծուեցար, այլ իմաստուն, հեզ եւ հանդարտ: Ինչո՞ւ համար բնութենէդ դուրս գալով կամովին կը նմանիս անոնց գազանութեան: Անոնք իսկ, շատ անգամ մարդոցմէ դիւթուած իրենց բնութենէն դուրս գալով ոչ ոքի կը վնասեն, մինչ քո բարկութիւնդ՝ ո՛չ աղաչական անոյշ խօսքերը, ո՛չ բարեկամներու աղերսանքները, ո՛չ սիրելիներու խրատը, ո՛չ Աստուծոյ վախը եւ ո՛չ ալ գեհէնի սպառնալիքը կը մեղմացնեն, այլ որու որ մօտենաս կը գարնես ու կը վիրաւորես:

ՄԵՆ ՊԿՆՈՑ ԿԻՐԱԿՆԵՐԸ
ԳՎԱՍՏԵԱՆ ԿԻՐԱԿԻ

Մեծ Պահոց վեցերորդ Կիրակին կը կոչուի Գալստեան Կիրակի: Արդէն իսկ մօտեցած ենք Մեծ Պահոց վերջին՝ եօթներորդ շաբթուան, երբ հոգեւոր պատրաստութեան շրջանը իր աւարտին պիտի հասնի:

Գալստեան Կիրակին իր շարականներով կը բացայայտէ Քրիստոսի առաջին աշխարհի գալուստն ու տակաւ իր վախճանին հասնող անոր առաքելութեան պատկերմը՝ Աստուածորդայն տնօրինական կեանքին վերջին յուզիչ դէպքերով:

Օրուան յատուկ՝ Օրհնութեան շարականը գեղեցկօրէն կը ներկայացնէ Գալստեան մեծ Խորհուրդը, զոր նախապէս գուշական էին մարգարէները եւ Ս. Հոգւոյն ներշնչումով բազում օրինակներով ծանուցած էին անոր մասին:

Կու գար Ան ծառայի կերպարանք գգեցած: Կու գար, որպէս Փրկիչ մարդկութեան: Կու գար, որպէս նոր Ադամ պարտագանց նախածնողներու մեղքը ջնջելու եւ կորուստեալները դարձի բերելու:

Վերոյիշեալ մտածումներով, Մեծ Պահոց վեցերորդ Կիրակին՝ գղջումի եւ ապաշխարութեան հոգեվիճակին մէջ գտնուող քրիստոնեայ անհատը կ'առաջնորդէ վերականգնելու Գալստեան մեծ խորհուրդով, եւ միանգամայն կը շեշտէ մարդացեալ Աստուածորդայն առաքելութիւնը՝ վերականգման եւ փրկութեան ցանապարհին:

Ահա այս մտածումը իմեցին՝ պակասման է օրուան ցաշու Աւետարանի պատգամին, որ կ'ըսէ. «Բայց կ'ըսեմ, նաեւ, ա՛յ պիտի չտեսնէք գիս, մի՞նչեւ որ ըսէք. Օրհեալ ըլլայ ան՝ որ կու գայ Տիրոջ անունով» (Մտթ. 23.39):



ԲՈՒ ԽՍՐԷՂ ԽՍ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸԱՒԻՆՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119.105)

ԺԶ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 26 ՄԱՐՏ 2023 ԹԻՒ 13

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Սու. 66. 1-24: Կդ. 2.8-3.17: Մտթ. 22.34-23.29

Ա. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՅ. ԳՎԱՍՏԵԱՆ ԿԻՐԱԿԻ

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՆՈՍԻ 22.34-23.29

Երբ փարիսեցիները լսեցին, թէ Յիսուս Սաղուկեցիները պապանձեցուց, իրարու քով եկան: Անոնցմէ մէկը, օրէնագէտ մը, Յիսուսը փորձելու համար հարցուց. «Վարդապետ, Օրէնքին մէջ ո՞րն է մեծագոյն պատուիրանը»: Յիսուս ըսաւ անոր. «Սիրէ՛ քու Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ եւ ամբողջ միտքովդ: Ասիկա է մեծագոյն եւ առաջին պատուիրանը: Երկրորդը ասոր նման է. Սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս: Այս երկու պատուիրաններէն կախեալ են ամբողջ Օրէնքը եւ մարգարէութիւնը»:

Երբ Փարիսեցիները հաւաքուեցան, Յիսուս հարցուց անոնց. «Ի՞նչ կը խորհիք Քրիստոսի խոստացուած Փրկիչին մասին: Որո՞ւ որդին է ան»: Անոնք պատասխանեցին. «Դաւիթի»: Յիսուս ըսաւ անոնց. «Բայց ինչպէ՞ս Դաւիթ Ս. Հոգիով ներշնչուած գայն Տէր կը կոչէ ու կ'ըսէ. «Տէրը իմ Տիրոջս ըսաւ. - աջ կողմնս ստէ, մինչեւ թշնամիներդ ոտքերուդ տակ դնեմ՝ որպէս պատուանդան»: «Արդ, եթէ Դաւիթ գայն Տէր կը կոչէ, ինչպէ՞ս անոր որդին կ'ըլլայ»: Ոչ ոք կրցաւ պատասխան տալ Յիսուսի. եւ այդ օրուանէ սկսեալ, ոեւէ մէկը չէր համարձակեր իրեն հարցում ուղղել:

Ապա Յիսուս ժողովուրդին եւ իր աշակերտներուն ըսաւ. «Մովսէսի աթոռը նստան օրէնքի ուսուցիչներն ու փարիսեցիները: Իրենց ըսածներուն հնազանդեցէ՛ք եւ կատարեցէ՛ք զանոնք, սակայն մի՛ ընէք ինչ որ իրենք կ'ընեն, որովհետեւ անոնք կը սորվեցնեն, բայց չեն կատարեր: Անոնք ծանր եւ դժուարակիր բեռներ կը դնեն մարդոց ուսերուն, մինչ իրենք նոյն բեռները կրելու նուազագոյն ճիգն իսկ չեն ըներ: Ինչ որ կ'ընեն՝ մարդոց երեսելու համար կ'ընեն: Իրենց գրպանակները կը լայնցնեն եւ իրենց հագուստներուն ծոպերը կ'երկնցնեն: Ընթրիքներու ընթացքին պատույ տեղերը գրաւել կը սիրեն եւ ժողովարաններու մէջ՝ առաջին աթոռները: Կը սիրեն հրապարակներու վրայ մարդոցմէ բարեւներ ընդունիլ եւ «Վարդապետ», այսինքն «Ուսուցիչ» կոչուիլ: Բայց դուք, ոեւէ մէկը «Վարդապետ» մի՛ կոչէք, որովհետեւ դուք բոլորդ եղբայրներ էք եւ մէկ ուսուցիչ ունիք: Երկրի վրայ, ոեւէ մէկը «հայր» մի՛ կոչէք, որովհետեւ դուք մէկ Հայր ունիք, որ երկինքի մէջ է: «Առաջնորդ» մի՛ կոչուիք, որովհետեւ ձեր միակ առաջնորդը Քրիստոս է: Ձեր մէջէն մեծը թող ձեր սպասաւորը ըլլայ: Ով, որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի եւ ով, որ իր անձը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ



Հայ եկեղեցին Գրիգոր Լուսավորիչը սուրբ դասած է, իսկ Ընդհանրական եկեղեցին գայն դասած է մեծ սուրբերու շարքին: Ան կոչուած է «Հայոց Մկրտիչ», «Երկրորդ Լուսավորիչ Հայոց» (Թաղեաւ եւ Բարթողիմէոս առաքեալներէն ետ):

Գրիգոր Լուսավորիչ Հայոց առաջին եպիսկոպոսապետն է 302 թուականէն ի վեր, եւ նկատուած է համաֆրիստոնեական սուրբ, որուն սօնը կը սօնուի: Ս. Գրիգոր Պարթեւական տունէն էր: Երբ իր հայրը՝ Անակ Պարթեւ, սպաննեց Հայոց Խոսրով թագաւորը, իշխաններու վրէժխնդրութենէն փրկելու համար դայեակները մանուկը Կեսարիա փախցուցին: Հոն շուտով մկրտեցին զինք Գրիգորիոս անունով: Նոյն ֆաղափն մէջ ան ուսանեցաւ ու բարձրագոյն կրթութիւնը ստացաւ: Չափահաս դառնալէ ետք ամուսնացաւ կեսարացի Դաւիթի աղջկան՝ Մարիամի հետ: Երկու զաւակներ (Վրթանէս ու Արիստակէս ապագայ հայոց կաթողիկոսներ՝ Արիստակէս Ա. Պարթեւ եւ Վրթանէս Ա. Պարթեւ) ունենալէ ետք, անոնք իրարմէ կը բաժնուին: Գրիգորը կը մտնէ արժունի ծառայութիւն, իսկ Մարիամը կրտսեր զաւակին հետ կը ֆաշուի կուսանոց, աւագ որդին ինամատարին յանձնելով: Երբ Գրիգորը կը լսէ իր հօր կատարածը, Խոսրով արքայի զաւակին՝ Տրդատ արքայի մօտ ծառայութեան կը մտնէ, առանց ըսելու թէ ո՞վ է ինք: 276-ին, երբ պարսիկներու Վոստ թագաւորը կը գրաւէ Հայաստանը, Գրիգոր Պարթեւը՝ Տրդատ Գ. Մեծին հետ կ'երթայ հռոմէական կայսրութիւն: 287-ին տիրանալով իր հօր գահին՝ Տրդատ Գ. Մեծը, իր յաղթանակին առիթով, Եկեղեցաց զաւաթի Երիզա աւանին մօտ՝ Անահիտի մեհեանին մէջ գոհութեան տօնախմբութիւն կը կազմակերպէ:

Հայոց թագաւորը, ֆրիստոնեայ պալատականներուն, որոնց շարքին նաեւ Գրիգոր, կը հրամայէ մասնակցիլ պաշտամունքին եւ երկրը պագել Անահիտ աստուածուհիի բագինին: Գրիգոր կը մերժէ առաջարկը: Տրդատ Մեծի հրամանով գայն կը նետեն մահապարտներուն բանտը՝ Խոր Վիրապ, որ թունաւոր օճերով լեցուն էր, եւ ուրկէ ոչ ոք կրցած էր ազատիլ:

Անոր հրամանով Գրիգոր Պարթեւի բանտարկութեան վերջին տարին՝ 301 թուականին, Սուրբ Հռիփսիմեանց եւ Գայիանեան 37 կոյսերը կը նահատակուին Վաղարշապատ ֆաղափի մօտերը: Ս. Հռիփսիմեանց կոյսերու նահատակութենէն ետք Տրդատ արքան կը պատժուի: Դիւահար թագաւորը վայրի խոզի նման կը դառնայ եւ եղգնուտերու մէջ կը մտնէ: Պատիժէն զերծ մնացած իր ֆոյրը՝ Խոսրովի դուխտը տեսիլք մը կը տեսնէ, որ կը կրկնուի հինգ անգամ, ըստ որուն միայն Գրիգորը կրնար բուժել դիւահար թագաւորը: Խոսրովի դուխտի ինամակալ՝ Օտա Ամատունին, Գրիգորը հանդիսաւոր շուքով Խոր Վիրապէն Վաղարշապատ կը բերէ: Ապա, արքային աղաչանքը տեսնելով, Աստուծմէ ստացած իր գորութեամբ կը բժշկէ Տրդատ Մեծը եւ բոլոր դիւահար պալատականները: Տեսիլքին մէջ Սուրբ Գրիգորին կը յայտնուի կոյսերուն վկայարաններուն վայրը: Դարձի եկած արքան հրաման կու տայ, որ բոլոր ֆրիստոնեաններուն դէմ հալածանքը դադրի եւ ժողովուրդը ազատօրէն պաշտէ Քրիստոսի սուրբ հաւատքը: Եւ այսպիսով, Տրդատ Գ. Մեծը 301 թուականին աշխարհի մէջ առաջին անգամ ըլլալով, ֆրիստոնէութիւնը Հայաստանի պետական կրօնը կը հռչակէ: 302 թուականի սկիզբը, 16 նախարարներու ընկերակցութեամբ եւ թագաւորական հրովարտակով, Գրիգորը Կեսարիա կը մեկնի, ուր Հայոց հայրապետ կը ձեռնադրուի:

6 Յունուար, 303-ին առաւօտեան Ս. Ծննդեան եւ Աստուածայայտութեան տօնին օրը, Արաձանի գետի ալունքին մօտ, Նպատ լերան ստորոտին, Գրիգոր կը մկրտէ Տրդատ Գ. Մեծը ու ամբողջ արքունի աւագանին: Նոյն տեղը, եօթը օրերու ընթացքին ան կը մկրտէ նաեւ արքունի գորքն ու ժողովուրդը:

303-ին սկիզբը, արքան ու հայրապետը մայրաքաղաք՝ Վաղարշապատ կը վերադառնան եւ Գրիգոր Լուսավորիչ՝ իր տեսիլքին համաձայն, արքունի գահին մօտ Միաձնի իջած վայրին վրան հեթանոսական մեհեանին տեղը կը կառուցէ Էջմիածնի (Էջ Միածինն) Տաճարը, ուր կը հաստատուի Հայոց Առաքեալական Աթոռը, իսկ Էջմիածին Տաճարը կը դառնայ հայոց առաջին եկեղեցին:

Հ ՈՉԵՒ ՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ՊԱՏՍԷ ԱՍՏՈՒԾՈՅ ԸՐԱԾԻԴ ՄԱՍԻՆ

ՏՏունդ դարձիր եւ պատմէ ինչ որ Աստուած քեզի ըրաւ» (Ղկ. 8.39): Յիսուս բժշկեց չար ոգիներով բնակւած Գերգեսացի մարդ մը եւ ապա անոր պատուիրեց տուն երթալ եւ պատմել Աստուծոյ ըրածին մասին: Չար ոգիներով բնակուած մարդիկ իրենց տան անդամներուն համար նախատինք էին, ահա թէ ինչու, առաջին հերթին Գերգեսացին իր ընտանիքի անդամներուն պէտք է երթար, որպէսզի ինչպէս անոնց համար նախատինք դարձած էր, այս անգամ դառնար օրհնութիւն: «Պատմէ, ինչ որ Աստուած քեզի ըրաւ»: Մեր կոչումն է պատմել ու վկայել Աստուծոյ գործին ու սիրոյն մասին: Քրիստոնէայ մարդը իրաւունք չունի լուռ ու մունջ կենալու Աստուծոյ ձայնին կարօտով տոչորոտ այս աշխարհին մէջ:

ՊԱՇՏՅՈՂՈՒԹԻՒՆԸ

Պահքը ծնունդ կու տայ մարգարէներու եւ կը զօրացնէ զօրաւորը: Պահքը օրէնք տուողը կը դարձնէ իմաստուն: Պահքը պահպանակն է հոգիին եւ հաստատ ընկերակիցը մարմնին, ...: Պահքը կը վանէ փորձութիւնները եւ մեզ կ'օժէ ու բարեպաշտ կը դարձնէ: Պահքը հոգեւոր արթնութեան ընկերակիցն է եւ ինարիչը՝ ողջախոհութեան: (Օգոստինոս)

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒՋԵՍ...

ԵՐԲ Կ'ՈՒՋԵՍ ԳԻՏՆԱԿ ԶԱՐԲԵՐՈՒՄՆ ՎԱՆՏԱՆԵՐ, Կարդա՛ր Մաղմուս 52

Ինչո՞ւ չարութեամբ կը պարծենաս, ամբարտաւան մարդ, մնալուն նախատինք դառնալով Աստուծոյ: Չարիքներ կը խորհիս, լեզուովդ կը վիրաւորես սուր անելիի պէս, եւ նենգութիւն կ'ընես: Բարիքէն աւելի չարիքը կը սիրես, ճշմարտութիւնը խօսելէն աւելի՝ ստութիւնը: Կը սիրես կործանիչ խօսքեր, դուն՝ նենգաւոր լեզու: Ուստի Աստուած քեզի յախտեան պիտի կործանէ, պիտի բռնէ ու խլէ քեզ քու տունէդ, արմատախիլ պիտի ընէ քեզ ողջերու աշխարհէն: Արդարները պիտի տեսնեն ու վախնան, պիտի ծիծաղին քու վրայ, եւ պիտի ըսեն,- «Ահա այն մարդը, որ զԱստուած իր ապաւենը չդարձուց. իր անբաւ հարստութեան վստահեցաւ, եւ չարութեան մէջ փնտռեց իր գործութիւնը»: Բայց ես Աստուծոյ տան մէջ տնկուած պտղալից ձիթենի մըն եմ, Աստուծոյ սիրոյն կը վստահիմ առշաւտ:

Մեզի յաւետ գոհութիւն պիտի յայտնեն, ո՛վ Աստուած, ինծի ըրած քու բարիքներուդ համար, եւ քու անունդ ու բարութիւնդ պիտի հռչակեն ներկայութեանը անոնց՝ որոնք քեզի հաւատարիմ են:

ՄԻՇՏ ՍԱՂՄՈՍ ԿԱՐԳԱՅԷՔ